

չին լացառութեամբ բառ է, կեղծաւոր, շողոբորթ, զուրկ կամքի ամրութիւնից, հասողմունքի հաստատութիւնից, նա պերճախօս է, մինչև անգամ շատախօս, բայց ոչ խօսուածքի, ոչ գրուածքի մէջ կայ վճռականութիւն, կորով, շեշտ: նա վախկոտ է հրեսյի նման, չի կարող համարձակ ասել կամ զրել Հայ ազգը, ազգային գրականութիւնը.— այլ կասի և կը զրի Հայ ցեղը, տորմային զրականութիւնը, շատ լաւ զիտնալով ազդ և զեղ կամ տօչմ բառերի տարբերութիւնը, երբ Պոլսեցի Հայը ուղենայ մէկին ասել վատ ես, սիսալ ես, նախ բան այդ՝ նա մի ահազին ճառ կը խօսի, վատ և սիսալ բառերի ոյժը թուաղնելու կամ ուղղակի աննկատելի դարձնելու համար:

Աերցէք նյոյնիսկ յայնին հրապարակախոսի համբաւ. վայելող Պոլսեցի Հայերին. ուշի ուշով կարդացէք նրանց գրածները, նախագասութիւնները, մաքերը, բառերը, ենթարկեցէք անսալիվի: և կը տեսնէք որ չը կայ մաքի խորութիւն, ըը կայ շեշտի համաձայնութիւն, չը կայ ոյժ, կորով, զրական կրակ. ընդհակառակը ամեն մի բառի տակ դուք կը զտնէք շոյելու, շողոբորթելու, հաճշանալու ձգտում:

Այսպէս են եղել և այսպէս են Թիւրքիայի Հայ զրագէտների ամենամեծ մասը:

MARS

Գ. ՇՐԷՅԹԴԷՐ. «Ծապօնիա կամ ծագող արեգակի երկիրը». ռուս. թարգմ. Ն. Ա. Նրատ. Ե. Զօհրաբեան և Մ. Սուլիսանեան ընկերութեան:

Աերշերս մեր մէշ'-գլխաւորապէս Թիֆլիսում—մանր հրատարակչների նախաձեռնութեամբ, պարբերաբար, յոյս են տեսնում գրական բովանդակութեամբ—մեծաւ մասամբ վիպական թէ ինքնուրոյն: և թէ թարգմանական մանր բրոշիւրներ, որոնց մի մասն արտատպութիւններ են այս կամ այն թերթից ու հանդիսից: Անշուշտ, չպէտք է յուսալ, որ այս տեսակի մանր հրատարակիչների ձեռքով՝ հրատարակչական գործը կարողանար մեղանում մեծ ժաւալ ստանալ, և կամ լուրջ ու բազմակողմանի բնաւորութիւն կրէր, բանի որ սրանց ամբողջ հրատարակչական բիւղքն մի քանի հարիւր յանէթից պյն կողմը չէ անդնում, պյն էլ մեծ մասամբ կազ-

մուած պատահական մանր մունր նուէրներից։ Նիւթական պակասութիւնն է պատճառ, որ շատ յաճախ այդ մանր հրատարակիչները մի քանի բրոշիր հրատարակելուց յետոյ՝ կամ իսպառ դադարում են գոյութիւն ունենալուց կամ տարիներով հազիր են կարողանում մի երկու նոր բրոշիր աւելացնել եղածների վրայ։

Ասենք ինչ տեղութիւն, նոյն իսկ յաջողութիւն է, ունենան այդ մանր հրատարակիչները, երբէք դրանք չեն կարող կովկասահայ գրական հրապարակում լուրջ ու սիստեմատից գործ առաջացնել։ չեն կարող հենց այն պատճառով, որ փոքր ի շատէ կանոնաւոր ու հիմնական գործ սկսելու համար հարոկաւոր է ե՛ւ կանոնաւոր դրամագլուխ։ իսկ հրատարակչական գործում, դրամագլուխ զատ, անհրաժեշտ է նաև խմբական աջակցութիւն, այն էլ կարող ու յուրջ պատրաստութիւն ունեղող անհատների կողմից։ Փաստը սակայն այն է, որ ներկայումըս այդ մանր հրատարակիչները ծառայում են հրատարակչական գործին և իրենց գյուղեամբ անհրաժեշտ կարիքի ծնունդ են կովկասահայ կեանքում։

Մանր հրատարակիչների աճումը ցոյց է տալիս, որ կովկասահայերին ներկայումս անհրաժեշտ է ունենալ հրատարակչական մի նոր ընկերութիւն, դրուած զուտ վաճառականական հիմունքների վրայ, որպիսիք գոյութիւն ունեն ուսուների, նոյն իսկ վրացիների մէջ, Խսկապէս վերջինների մէջ գյութիւն ունեցող ընկերութիւնն իր հիմունքներով՝ կարող է հայերիս համար օրինակ հանդիսանալ. սա բաւականին լայն ծրագրով մի ընկերութիւն է, որը հրատարակչական գործից գուրս, ունի նաև սեփական տպարան—իր տեղում առաջնակարգը, վեմագրասուն, կազմատուն և, ուր տպւում ու պատրաստում են թէ՛ ընկերութեան հրատարակութիւնները և թէ կողմանակի բազմաթիւ պատուէրներ. այդ ընկերութեան տպարանում էին տպւում հայ հանդէսներից մեկ երկուսը, ինչպէս և մինչև օրս բաւականաչափ հայերէն գրքեր։ Ընկերութիւնը փայերով է և բաւականին էլ տոկոս է ստանում տպարանական գործից։

Խակայն թողնենք այդ։

Մանր հրատարակութիւնների շարքին են պատկանում նաև Հ. Առաքելեանի այսպէս կոչուած «հանրամատչելի գրադարանի» երեք գրքոյները, որոնցից ձեռքի տակ ունենալով միայն.

վերջինը, այն է «Ճապոնիա կամ ծագող արեգակի երկրը», կլսօ-  
մենք միայն դրա մասին».

Հայ «հրատարակչի (թէև գիրքը ուրիշի ծախքով է տպագ-  
րած) առաջաբանից» իմանում ենք—

«Մտաղիր լինելով մեր ձեռնարկած «հանրամատչելի գրա-  
դարանի հրատարակութիւնների մէջ (շարքում) տալ և պատ-  
մածներ (?) զանազան երկիրների և ժողովուրդների մասին.  
մենք նպատակայարմար համարեցինք... տալ Նրէյդէրի վերոյի,  
շեալ գործի թարգմանութիւնը... որը սահմանած է յատկա-  
պէս ժողովրդական գրադարանների և ընթերցարանների համար  
և որ մնոնէ յայտնի ուուս հրատարակչուհի Պօպօվայի հրատա-  
րակութիւնների շարքը. հրատարակութիւնների, որոնք առհա-  
սարակ յայտնի են իրանց լուրջ (ընդգծումները մերն են) բո-  
վանդակութեամբ»:

Պարզ երեսում է, որ երկու հանգամանք դրդող են հան-  
դիսացել հրատարակչին թարգմանելու Նրէյդէրի վերոյիշեալ  
գործը հայերէնի. նաև որ Նրէյդէրի գրքոյկը «մտել է Ռուս  
յայտնի հրատարակչուհի Պօպօվայի հրատարակութիւնների շար-  
քը» և երկրորդ՝ գրուածքը «սահմանառած է յատկապէս ժողո-  
վրդական գրադարանների ու ընթերցարանների համար»:

Ոնկասկած ուշադրութեան առնուած երկու հանգամանքն  
էլ պատիւ կարող էին բերել հայ «հրատարակչին», ցոյց տա-  
լով՝ առհասարակ նրա զգոյշ ու լուրջ վերաբերմունքը դէպի  
իր ձեռնարկած ծանը գործը. սակայն ցաւով պէտք է նկատենք,  
որ Նրէյդէրի գործի ընթերցումն այդ չէ ցոյց տալիս. երե-  
տում է հայ թարգմանչին խաճել է ոռու յայտնի հրատա-  
րակչուհի Պօպօվայի անունը: Նրէյդէրի գրուածքը, ճիշտ է,  
թէև ժողովրդական ընթերցանութեան համար ունի որոշ յար-  
մարութիւններ՝ պարզ, նոյն իսկ՝ երբեմն էլ պատկերաւոր լե-  
զուած, թեթև, մատչելի նկարագրութիւն—սակայն ըսկանդակու-  
թեան ճշտութեան տեսասկէտից այնքան էլ լուսալի չէ կա-  
րելի համարել, չնայած որ նկարագրուղը պատմում է, որպէս  
ավանատես, իւ դա նրանից է, որ հեղինակը իր պատմածնե-  
րի մէջ անհետեւողական է, նախկին ասածները յաճախ ջըն-  
ջում է յետագայ երեսներում, և այդպիսով գրուածքը խնողում  
է հակասութիւններով»

«Նրանք (ճապոնացիները) բացի իրանց մայրենի՝ լեզվից,  
ուղից ոչ մի լեզու շզիտէին (երես 5). մի այլ տեղ գրում է.  
ճապոնացիները հպարտանում էին (նոյն իսկ) իրանց շանկա-

կան ունեցածով և չինական հին գղքերի ուամունքով՝ (երես 6) իսկ նոյն երեսի ժանօթութեան մէջ արդէն ասւած է. «Ճապօնիայում մինչեւ վերջին ժամանակներս կըթած դասակարգի լեզուն չինականն էր»: — «Ճապօնացիները բարու դասակարգի մասին է խօսքը) բոլորովին ստրուկ չէին...» (երես 13) սակայն մի քանի տող ետքը շաբունակում է. «Նըրանք զուրկ էին ամեն իրաւունքներից... Նրանք նոյն իսկ իրաւունք շունչին գանգատուելու...» իսկ երես 95-ում պարզ ասուած է. «Մինչեւ մահը մնում էին հպատակ ստրուկներ...» — «Ճապօնիայում ձի համարեա չկայ և ի վաղուց հետէ սովոր են մարդկանց գործ ածել ձիերի փոխարէն. փոխադրութեան համար նրանք ուրիշ ծեւ չգիտեն»: (երես 19) իսկ այլ տեղեր կարդում ենք «Ընտիր ձիերով լծուած գեղեցիկ կառքեր»: երես 91. «Կառքին լծած էին եզներ» երես 57: — «Ճապօնական տները շատ օրգինալ են և ինքնուրոյն, ցածր... չունեն ոչ ներքին եւ ոչ արտաքին պատեր (??) (երես 21). մի այլ տեղ. «Ամենուրեք (ծովափնեա քաղաքներում) գուք տեսնում էք քարեայ մեծ շինութիմները 78 երես: — «Ճապօնական տնակի մէջ ոչ մի կահ կարասիք չէք տեսնի» (եր. 21). այլ տեղեր կարդում ենք. նրանց (ճապօնացիների) կանկարասիքը բաւականին համեստ է» (երես 89). «իւրաքանչիւր տան մէջ ամենահարուատից մինչեւ յետին աղքատը, ամքողջ կահ կարասիքը շինուած են լաքած փայտից (թանգագին փայտն է) (105 երես): — «Ազգաքնակութեան մեծասասնութիւնը հացը դըժուարութեամբ է ծեռք բերում: Երկրի խորքերում կան աղքաներ, որոնք չեն կարողանում ծեռք բերել նոյն իսկ մի Փունդ բրինձ, որն ընդամենը արժէ կէս կոպէկ: Այս մարդիկ կերակրում են արմամներով ու խոտերով (երես 29), մի այլ տեղ. «Ճապօնացին ամբողջ տարին աշխատում է ինչպէս բգէզ, և նրան աջողուամէ գրեթէ քարեկեցութիւն ծեռք բերել և յամենայն դէպս ապրել ոչ—աղքատ (երես 39)... Եւ այսպէս մենք նորից կարող էինք շատացնել մեր օրինակների թիւը, սակայն կարծում ենք այսքանը ևս բաւական է ցոյց տալու գրլւածքի լրջութեան պակասութիւնը: Հեղինակի մի այլ գլխաւոր պակասութիւնն էլ շափազանցութիւնն սիրելն է, որ յաճախ նա գործ է ածում, նոյն իսկ հաստրակ իրողութիւններ նկարագրելիս, օրինակ ցոյց տալու համար ճա-

պոնացու իր տնտեսութեան վերաբերեալ խելացի կարգադրութիւնները, նոյն խոկ այն դէպքում, երբ ունեցածը չափազանց փոքր բան է կարդում ենք. «ճապոնացիները երբեմն բաւականանում են այնպիսի փոքրիկ բակերով (?)», ուր մեզ մօտ մի զոյգ եղներով լծած սայլը հազիւ կարող է շարժուել... այդպիսի մի տարածութեան վրայ ճապոնացիները շինուամ են թէ իրանց տնակները, թէ տնտեսական շինութիւնները (ինչ տնտեսական շինութիւններ, երբ տառած է ճապոնացին զուրկ է բնտանի կենդանիներից). թէ ճակներ եւ պարտէզներ, եւ շատրուաններ»... (Երես 31):

Նրբեմն էլ հեղինակը ցանկանալով որոշ երկոյթներ պարզել, անմոռութիւններ է ասում. «ճապոնացու սէրը դէպի հան-դէսները տօնախմբութիւնները... բացատրւում է նրանով, որ շատ տօն ունի». (Երես 52) մինչդեռ ծերունի ճապոնացին այդ նոյն սոթով, իրեն դիմող ճանապարհորդին աւելի խելացի բացատրութիւն է տալիս ասելով՝ որ իրենց սէրը դէպի հան-դէսները նրանից է, որ ճապոնացի ժողովուրդը լի օրերին. հանգիստ չունի, չսփազանց տարած է իր աշխատանքներով: Գրուածքում պատահում են նաև բազմաթիւ մութ, երբեմն էլ անճիշտ արտայայտութիւններ ու թխովի բառեր, որոնց մենք աւելի հակուած ենք վերագրելու հայ թարգմանչին քան թէ հեղինակին, ինկատի ունենալով նրա անկանոն ու միենոյն ժամանակ ոչ մաքուր հայերէնր.— «Զնայելով հողաբաժինի ահազին աշխատութեան (?)», ճապոնացին ամբողջ տարին աշխատում է (Երեսի ուզում է ասել հողաբաժնի դը-ժուար մշակութեան):— «Ճապոնացին ցեղից ցեղ սոովորում է աշխատանքի» (սերունդից-սերունդ վարժուում է աշխատանքի). «Վատ աշխատանք» (ծանր, քրտնաթոր աշխատանք): — «Ստրկութիւնը... կուացըել էր իրանց մէջքերը դէպի գետին (ստրկութիւնը կուչէր ածել, ճնշել էր նրանց :— «Հայ այլ ևս ոչ մի բան նման նրան, ինչ որ կար»: «Հասնել այն բանի մէջ... ինչի մէջ...— «լիակատար իրաւունքով» «թէյի վարդեր»... «սառը շաքար»... «ասնդրողուհիներ»... ևայլն ևայլն»:

Եթէ գրուածքն ազատ լինէր յիշատակուած խոշոր պակասութիւններից, իսկապէս կարող էր ժողովրդական ընթերցանութեանը լաւ նիւթ մատակարարել, չնորհիւ հեղինակի պարզ, թեթե ու մատչելի նկարազրութեան.

Նոր - Ձուղա .

Ա. ՊԱԶՄԱՆ